

իր շուրջի փոքր բաներուն, անտարբեր, գրեթէ սուտ, հեզնելով, ինծիպէսները, «մտքի աչքով քիչ օժտուածները» (կ'ակնարկէր դրապաշտները, որոնց դանդաղ կը գործէ երեւակայութիւնը), որոնք կը զբաղին մարդու մը մոյնքովը, տարազներովը, ծնողքներուն մասնայատկութիւններովը, ծննդավայրովը, չնչին, «փուճ» տղայական, հէնցումէնց մանրամասնութիւններով, խաղերով, - բոլորն ալ մարդ մը նիւթացնող:

Բերան փոխ մը, հանգիստ մը, շունչ առնել մը, ուրեմն իր անձնականին սա փշրանքները, որոնք մնացին քիչ, յագեցնելու համար իմ մուայլ հետաքրքրութիւնը մարդկային պատահարէն, պզտիկ դէպքեր (petit fait), որով խանդավառ սկսած եմ մտքիս շէնքը: Այնքան ալ դժուար էր զինքը կեցնել փորձել, երբ գաղափարները, վարդապետութիւնները «կը հոյնէր» (երնել, ցորենով խառն ծեծքը հովին տալ, հասկէն զատելու համար հատիկը) արտակարգ արագութեամբ: Առջի օրերու ժլատութիւնը քիչ-քիչ պիտի կոտրէր սակայն: Յետոյ գաղափարներու արտաբերումին համար իր վարժ յեղումը անզգալաբար կերպադրեց իր ոճը, երբ ան մօտեցաւ անձնական տարրերու արտահանումին: Յոգնեցնող, առատաբան իր ոճը, այդ ժլատ ինքնասփռումը ունեցաւ իբր հակադիր դրուագում մը:

Դուք, որ կը կարդաք սա տողերը, ինքզինքնիդ կը տանիք հեքիաթին, լեռնային քարայրի մը ներսը, տարօրինակ կրակի մը առջեւ օրեր երկարող սա վերլուծումին նոյնքան տարօրինակ յայտնութիւններով: Բայց եղէք ուշադիր: Յեղափոխական Մաթիկները, գէթ անոր դպրոցին խլեակները Սփիւռքի շատ մը հայաշատ կեդրոններուն վրայ կ'ապրին տակաւին: Ես հանդիպած եմ անոնց Եւրոպա, Ասիա, Ափրիկէ: Ու նոյնն էին բոլորն ալ, իրաւ է թէ գահազուրկ արքաներու նման աղօտափայլ, բայց իրենց հաւատացողներուն մօտ վայելելով նոյն անպարփակ հիացումը, զոր ունեցաւ ինձմէ ներս, 1902ին մեռնող Մաթիկ Մելիքխանեանցը: